

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԿԱՐԵՆ ԱՐԱՄԻ ՂԱՐՍԼՅԱՆ**

**ԼՈՐԵՆՍ ՍՏԵՌՆԻ «ՏՐԻՍՏՐԱՄ ՇԵՆԴԻ» ԵՎ ԶԵՅՄՍ ԶՈՅՄԻ  
«ՖԻՆԵԳԱՆԻ ՀՈԳԵՀԱՑԸ» ՎԵՊԵՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ.  
ԻՆՏԵՐՏԵԶՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Ժ. 01. 07 արտասահմանյան գրականություն մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝  
բ. գ. թ., դոցենտ  
Ստելա Նուրալովա

ԵՐԵՎԱՆ 2004

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	3
<b>1. ԳԼՈՒԽ ԱՈՒԱԶԻՆ. ԼՈՐԵՆԱ ՍՏԵՌՆԻ «ՏՐԻՍՏՐԱՍ ՇԵՆԴԻ» ՎԵՊԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ XVIII-XX ԴԱՐԵՐՈՒՄ: ԻՆՏԵՐՏԵԶՍԱՅՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ</b> .....	11
1.1. Լորենս Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ի ընկալումը XVIII-XX դարերում ...	15
1.2. Տրիստրամ Շենդի»-ն XVIII դարի անգլիական վեպի համատեքստում ....	39
1.3. Ինտերսուլթյեկտիվությունից ինտերտեքստայնություն. փոխզիջումային տարրերակ .....	63
<b>2. ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՍՏԵՌՆԻ «ՏՐԻՍՏՐԱՍ ՇԵՆԴԻ» ԵՎ ԶՈՅՍԻ «ՖԻՆԵԳԱՆԻ ՀՈԳԵՅԱՑԸ» ՎԵՊԵՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ</b> .....	78
2.1. Այնշտայնի հարաբերականության հատուկ տեսության տարրերը «Տրիստրամ Շենդի»-ի քրոնոտոպում .....	80
2.2. Այնշտայնի հարաբերականության հատուկ տեսությունը որպես «Տրիստրամ Շենդի» և «Ֆինեգանի հոգեհացը» վեպերի քրոնոտոպային ինտերտեքստայնության միջնորդ .....	97
2.3. Վիկոյի պատմության ցիկլայնության հայեցակարգը որպես «Տրիստրամ Շենդի» և «Ֆինեգանի հոգեհացը» վեպերի քրոնոտոպային և կոմպոզիցիոն ինտերտեքստայնության միջնորդ .....	112
2.4. «Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» էստաֆետային ինտերտեքստայնությունը .....	129
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ</b> .....	157
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b> .....	161

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լորենս Ստեռնին (1713-1768) անգլիական գրականության դասական համարվելու բախտը վիճակվեց XX դարի սկզբում՝ իր մահվանից մոտ 150 տարի անց: Իր ծննդյան միայն 200-ամյակից և եթե սկսեցին ակտիվորեն վերահրատարակվել նրա ստեղծագործությունները, ընդգրկվել անթուրգիաներում ու քրեստոմատիաներում, կրթական ծրագրերում: XX դարում էր, որ լուրջ գրականագիտական քննության առևձեռն Ստեռնի թողած գրական ժառանգությունը, մասնավորապես՝ նրա «Տրիստրամ Շենդի ջենթլմենի կյանքն ու կարծիքները» (1759-1767) (Life and Opinions of Tristram Shandy, Gentleman) վեպը: Մինչ այդ նրա ստեղծագործությունն ու անցած կյանքը չափազանց հակասական վերաբերմունք էին առաջացնում նրա ժամանակակիցների ու XIX դարում գործող գրական հեղինակությունների լայն շրջանակներում:

«Տրիստրամ Շենդի»-ն կարելի է դասել գրականության պատմության մեջ առավել ուսումնասիրված վեպերի շարքին: Թեև այս հանգամանքը բավականին դժվարացնում է անդրադարձը տվյալ ստեղծագործությանը, այնուամենայնիվ դեռ կան բոլորովին չլուսաբանված արժանահիշատակ առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրությանն է նվիրված այս ատենախոսությունը: Այս պարագայում արդիական են հնչում մոտ 90 տարվա վաղեմություն ունեցող՝ XX դարի առաջին ստեռնաբաններից սովետական գրականագետ Վիկտոր Շկլովսկու խսբերը. «Ստեռնն ունի այնպիսի ճամփաներ, որտեղ նրանից հետո մարդու ոտք չի կպել... Ստեռնի գիրքը խոսում է անասելիի մասին. այն արձակում է այնպիսի հանգույցներ, որոնք դեռ չեն արձակվել» (52, 192):

Տվյալ ատենախոսության բուն նպատակներն ու խնդիրները հենց այդ «դեռ չարձակված հանգույցներից» մի քանիսի արձակումն են: Մեր ատենախոսությունում ուսումնասիրության հիմնական նպատակներն ու խնդիրներն ըստ հերթականության հետևյալն են.

- XVIII-XX դդ. ազդեցիկ գրողների ու գրաքննադատների կողմից Ստեռնի ստեղծագործության (մասնավորապես՝ «Տրիստրամ Շենդի»-ի) ընկալման, արժևորման էվոլյուցիայի ամփոփում:
- XVIII դարի անգլիական վեպի և սենտիմենտալիզմի շրջանակներում Ստեռնի ստեղծագործության տեղի ու դերի հստակեցում: «Տրիստրամ Շենդի»-ի ժանրային պատկանելության խնդրի քննարկում:
- Ստեռնի ստեղծագործության այն առանձնահատկությունների լուսաբանում, որոնք կանխագործում են մոդեռնիստական և պոստմոդեռնիստական գրականությանը հատուկ որակներ:
- Ինտերտեքստային տեսության հիմնական տարրերի լուսաբանում, որով հիմնավորվում է Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ի և Ջոյսի «Ֆինեգանի հոգեհացի» (*Finnegans Wake*) միջև առավել սերտ կապեր բացահայտելու նպատակով ներմուծվող նոր ինտերտեքստային հասկացությունների անհրաժեշտությունը:
- «Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» միջտեքստային մերձության բացահայտման նպատակով *Էստաֆետային ինտերտեքստայնություն* նոր հասկացության սահմանում և կիրառում:

*Միջդիսցիպլինար ուսումնասիրության փորձեր.*

- «Տրիստրամ Շենդի»-ում ժամանակի ու տարածության այնպիսի ընկալման բացահայտում ու հանգամանալից վերլուծում, որը կարծես նախանշում է Ալբերտ Այնշտայնի հարաբերականության հատուկ տեսությանը բնորոշ ժամանակի և տարածության հասկացողությունը, որը գիտականորեն հիմնավորվել է XX դարի սկզբում՝ վեպի հրատարակումից մոտ 150 տարի անց:
- Ժամանակին և տարածությանն առնչվող վերլուծությունների հիման վրա Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ի և Ջոյսի «Ֆինեգանի հոգեհացի» սերտ

ինտերտեքստային կապերի բացահայտում *քրոնտոպային*  
*ինտերտեքստայնություն* նոր հասկացության միջոցով:

- *Քրոնտոպային ինտերտեքստայնության* միջոցով Ստեռնի առաջին և Ջոյսի վերջին վեպերում առկա *միկրոսկոպիկ պոլիֆոնիա* երևույթի բացահայտում:
- «Տրիստրամ Շենդի»-ի կոմպոզիցիայի շրջանաձև բնույթի դիտարկումը իտալացի փիլիսոփա Ջամբատիստա Վիկոյի պատմության ցիկլայնության հայեցակարգի տեսանկյունից:
- *Քրոնտոպային ինտերտեքստայնության* շնորհիվ «Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» միջև ինտերտեքստային հարազատության նոր չափայնության բացահայտում *կոմպոզիցիոն ինտերտեքստայնություն* նոր հասկացության միջոցով:

Վերոնշյալ նպատակների ու խնդիրների լուսաբանման կարևորությունը, անհրաժեշտությունն ու արդիականությունն ակնհայտ դարձնելու նպատակով առաջին գլխի սկզբում անդրադառնում ենք մեր գլխավոր թեմային առնչվող խնդիրների ուսումնասիրվածությանը: Առաջին հերթին ներկայացնում ենք «Տրիստրամ Շենդի»-ին նվիրված ուսումնասիրությունները, մասնավորապես ժամանակի և տարածության կատեգորիաների լուսաբանվածության կտրվածքով: Երկրորդ հերթին անդրադառնում ենք այն ուսումնասիրություններին, որոնք նվիրված են «Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» համեմատական վերլուծությանը:

Մեր ատենախոսության թեմային առնչվող քննադատական գրականության հետ ծանոթությունը ավելի է հեշտացնում մեր նպատակների ու խնդիրների գիտական նորության ու արդիականության հիմնավորումը:

Հայաստանյան գրականագիտական ոլորտում տվյալ ատենախոսության գիտական նորույթն ու արդիականությունը պայմանավորված են նրանով, որ հայաստանյան գրականագիտական պատմության մեջ առնվազն ատենախոսական մակարդակով

ո՛չ Ստեռնի, ո՛չ էլ Ջոյսի ստեղծագործությունը երբևէ քննության չէր առնվել: Դա համարում ենք մեծ բացթողում, քանի որ փաստորեն անտեսվել են համաշխարհային գրականության մեջ բեկումնային ազդեցություն գործած՝ այս երկու գրողների ստեղծագործությունները: Հատկանշական է նաև այն փաստը, որ տվյալ ատենախոսության մեջ առաջին անգամ հայաստանյան գրականագիտության առնվազն ատենախոսական պատմության մեջ կիրառվել է ինտերտեքստային վերլուծության մեթոդը:

Այս ատենախոսությունն իր յուրահատուկ ներդրումն ունի ստեռնագիտության և ջոյսագիտության ասպարեզում, քանի որ դրանց ուսումնասիրման համար այստեղ կիրառվել են բուլորովին նոր մոտեցումներ ու լուծումներ, որոնք նորովի են մատուցում Ստեռնի ու Ջոյսի ստեղծագործությունները ժամանակատարածական դիտանկյունից: Որպես գիտական նորույթ ատենախոսությունում հանդես են գալիս նաև մասնավորապես *բրոնտոպային ինտերտեքստայնություն* և *եստաֆետային ինտերտեքստայնություն* նոր հասկացությունները, որոնց լիարժեք նախադեպը դեռ պատշաճ կերպով չի զարգացվել ինտերտեքստայնության տեսության ոլորտում: Այս հասկացությունները այն հիմնական «գործիքներն» են, որոնք թույլ են տալիս վերհանել սերտ ինտերտեքստային հարաբերություններ Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ի և Ջոյսի «Ֆինեգանի հոգեհացի» միջև:

Մեր լուծումների գիտական նորույթն ու արդիականությունը ցայտունս դրսևորվում են թե՛ անհատական, թե՛ ինտերտեքստային վերլուծությունների միջոցով Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ում ժամանակի ու տարածության այնպիսի ընկալման բացահայտմամբ, որը, ինչպես նշել ենք վերը, հարազատ է Այնշտայնի հարաբերականության հատուկ տեսությանը բնորոշ ժամանակի և տարածության հասկացողությանը: Շատ հետազոտողներ են ընդգծել Ստեռնի ստեղծագործությունում գործող ժամանակի հարաբերական բնույթը, անհամատեղելիությունը ժամանակի և տարածության նյութոսյան հասկացողության հետ: Այդուհանդերձ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, ոչ ոք չէր փորձել Ստեռնի ստեղծագործության բրոնտոպի հարաբերականությունը դիտարկել Այնշտայնի հարաբերականության հատուկ տեսության ներքո: Ստեռնին ու Այնշտայնին միավորում է ընդհանուր գաղափարական հակառակորդի առկայությունը: Ե՛վ

Ստեռնի փորձարկումները, և՛ Այնշտայնի դրույթներն ուղղված են ընդդեմ Նյուտոնի գիտական դետերմինիզմի, որտեղ ժամանակն ու տարածությունն ընկալվում են որպես բացարձակ կատեգորիաներ:

Ստեռնի քրոնոտոպի ու Այնշտայնի հարաբերականության հատուկ տեսության որոշ ասպեկտների համադրումը միջոցիցիալիսար մի ուսումնասիրությունն է, որի նպատակը Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ի քրոնոտոպի որակման նոր մոտեցումներ հայտնաբերելուց զատ նաև դրանք Այնշտայնի հեղափոխական տեսություններին լավատեղյակ ու դրանք իր ստեղծագործությունում բազմիցս վկայակոչած Ջոյսի «Ֆինեգանի հոգեհացի» հետ ինտերտեքստային հարաբերությունների ներքո դիտարկելն է:

Հարկ է նշել նաև, որ, ի տարբերություն մեզ հայտնի այլ ուսումնասիրությունների, մեր հետազոտությունը նպատակ չունի ցույց տալու, թե ինչքանով է ազդված Ջոյսն իր ավագ գրչեղբորից, այսինքն՝ ինտերտեքստային կապեր բացահայտելու նպատակ չի հետապնդում: Այս աշխատության մեջ գլխավորը ինտերտեքստային հարաբերությունների բացահայտումն է, կապեր որոնք հաճախ առկա են անկախ հեղինակների մտադրության ու գիտակցման:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից: Գլուխներն իրենց հերթին բաղկացած են մի քանի ենթագլուխներից:

Առաջին գլուխը, որը կոչվում է «Լորենս Ստեռնի «Տրիստրամ Շենդի» վեպի ընկալումը XVIII-XX դարերում: Ինտերտեքստայնության տեսության հիմնական տարրերը» բաղկացած է երեք վերնագրված ենթագլուխներից.

#### **1. Լորենս Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ի ընկալումը XVIII-XX դարերում:**

Ժամանակագրական կարգով ներկայացված են XVIII-XX դարերում տարբեր գրական գործիչների կողմից Ստեռնի «Տրիստրամ Շենդի» վեպի ընկալման առավել ցայտուն օրինակներ:

**2. «Տրիստրամ Շենդի»-ն XVIII դարի անգլիական վեպի համատեքստում:**

Ընդհանուր խոսքերով դիտարկվում է այս ստեղծագործության տեղը XVIII դարի անգլիական գրականության մեջ, ինչպես նաև քննության է առնվում Ստեռնի ստեղծագործության առնչությունը սենտիմենտալիզմին: Քննվում են «Տրիստրամ Շենդի»-ի առանձնահատկությունները՝ շեշտելով այն յուրահատուկ գծերը, որոնցով այդ ստեղծագործությունը զատվում է XVIII դարի անգլիական այլ վեպերից և, միևնույն ժամանակ, կանխագործում XX դարի (մոդեռնիստական և պոստմոդեռնիստական) գրականությանը հատուկ որակներ:

**3. Ինտերսուբյեկտիվությունից ինտերտեքստայնություն. փոխզիջումային**

**տարբերակ:** Այստեղ ներկայացվում են ինտերտեքստայնության որպես ինքնուրույն տեսության առաջացման ու զարգացման նախադրյալները, տարբեր մոտեցումներ, մեկնաբանություններ ու միջտեքստային կապեր արձանագրող հասկացություններ՝ ըստ ատենախոսությանն առնչվող խնդիրների:

Երկրորդ գլուխը կոչվում է «Ստեռնի «Տրիստրամ Շենդի» վեպի քրոնոտոպային առանձնահատկությունները Ջոյսի «Ֆինեգանի հոգեհացը» վեպի հետ ինտերտեքստային հարաբերությունների ներքո»: Այս գլուխը բաղկացած է 4 ենթագլուխներից.

**1. Այնչտայնի հարաբերականության հատուկ տեսության տարրերը «Տրիստրամ**

**Շենդի»-ի քրոնոտոպում:** Քննվում են Ստեռնի քրոնոտոպի այն առանձնահատկությունները, որոնք հակադրվում են նյուտոնյան ժամանակի և տարածության բնույթին: «Տրիստրամ Շենդի»-ի որոշակի դրվագի իմանենտ (ներհատուկ) վերլուծությունը թույլ է տալիս անալոգիայի միջոցով ընդհանրություններ գտնել Ստեռնի վեպում ժամանակատարածական շերտի ու հարաբերականության հատուկ տեսության «երկարության կրճատում» հասկացության միջև:

2. **Այնչտայնի հարաբերականության հատուկ տեսությունը որպես «Տրիստրամ Շենդի» և «Ֆինեգանի հոգեհացը» վեպերի քրոնոտոպային ինտերտեքստայնության միջնորդ:** Այս ենթագլխում արդեն կատարվում է «Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» ինտերտեքստային վերլուծություն Այնչտայնի հարաբերականության տեսության մեկ այլ ասպեկտի՝ ժամանակի տևողության տեսանկյունից: Այս ենթագլխում է սահմանվում քրոնոտոպային ինտերտեքստայնություն հասկացությունը:
  
3. **Վիկոյի՝ պատմության ցիկլայնության հայեցակարգը որպես «Տրիստրամ Շենդի» և «Ֆինեգանի հոգեհացը» վեպերի քրոնոտոպային և կոմպոզիցիոն ինտերտեքստայնության միջնորդ:** Ստեռնի «Տրիստրամ Շենդի» վեպում երևան են հանվում Ջամբատիստա Վիկոյի՝ պատմության ցիկլայնության հայեցակարգին բնորոշ տարրեր: Երկուստեք շրջանաձև կոմպոզիցիայի առկայությունը թույլ է տալիս «Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» մերձությունը տեսնել նաև կոմպոզիցիոն ինտերտեքստայնության միջոցով:
  
4. **«Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» էստաֆետային ինտերտեքստայնությունը:** Այս ենթագլխում սահմանվում է էստաֆետային ինտերտեքստայնություն հասկացությունը, որը հնարավորություն է տալիս տեսնել բոլորովին նոր միջտեքստային կապ «Տրիստրամ Շենդի»-ի և «Ֆինեգանի հոգեհացի» միջև: Ի տարբերություն քրոնոտոպային և կոմպոզիցիոն ինտերտեքստայնության, էստաֆետայինը միջնորդավորված չէ որևիցե երրորդ տեքստով:

Չրատարակվել են ատենախոսության թեմային առնչվող հետևյալ երեք հոդվածները. “Стерн и Джойс: к проблеме интертекстуальности,” “Искусство игры на часовых стрелках по Стерну” և «Քրոնոտոպի պարադոքսալությունը Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ում. Այնչտայնի հարաբերականության տեսությունը գրական չափաշխարհում»:

Ատենախոսության նվաճումները կարող են օգտագործվել հատկապես Ստեռնի և Ջոյսի պոետիկայի համադրական և միմյանցից զատ ուսումնասիրություններ

կատարելիս, ընդհանուր առմամբ, XVIII և XX դարերի անգլիական գրականության համադրական ուսումնասիրություններ, ինտերտեքստային վերլուծություններ կատարելիս, ինչպես նաև վիպական քրոնոտոպի հետազոտություններում: Հոսով ենք, որ այս աշխատությունն էլ ավելի կիսթանի միջդիսցիպլինար հետազոտություններ գրականագիտության բնագավառում:

Գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը բուհական համակարգում մասնավորապես Ստեռնի ու Ջոյսի ստեղծագործության մատուցման համար կարող է ապահովել նոր մոտեցումներով հարուստ նյութ, որն իր հետ բերում է XVIII և XX դարի հատկապես անգլիական գրական ժառանգության որակապես նոր ըմբռնում: Ակնկալում ենք, որ տվյալ աշխատությունը կնպաստի ինտերտեքստային վերլուծությունների կիրառմանը հայրենական գրականագիտության ոլորտում, որտեղ գերակա է գրական ստեղծագործությունների համեմատական վերլուծության ինտերսուբյեկտիվային մեթոդը: